

ԱՂՕԹՈՂԸ ՀԱՏ ԲԱՆ ԸՍԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԻ

Աղօթողը շատ բան ըսելու կարիք չունի: Մաքսատրը մէկ խօսք արտասանեց ու իր աղօթքը լսելի եղաւ եւ ան թեթեւցաւ իր մեղքերու բեռէն: Մովսէս լուռ բերանով աղաղակեց ու ծովը յատակէն բաժնեց: Դուն ալ եթէ ամբողջ սրտով աղաչես, կրնաս մեղքերու ծովը ցամքեցնել եւ բարկութեան ալիքները կասեցնել: Եթէ Աստուծմէ պատասխան չես ստանար, պատճառը այն է, որ չես թախանձեր կամ սրտով չես աղօթեր եւ կամ վնասակար բան մը կը խնդրես, իսկ եթէ յարատեւ աղօթքներով հոգիին օգտակար բան մը խնդրես, անկարելի բան է, որ Աստուած զայն չընդունի: Եղիայի աղօթքները երկինքը բացին եւ գոցեցին, Դաւիթի աղօթքները հրեշտակին սուրը անշարժացուցին, Յովմանի աղօթքները զինք կէտ ձուկին փորէն կենդանի դուրս բերին, Քանանացիին աղօթքները իր աղչական մարմինէն դեւեր դուրս հանեցին, աղօթքները պոռնիկները սրբացուցին, հիւանդները բժշկեցին, կոյրերը լուսատրեցին եւ մեղատորները արդարացուցին:

Ուրեմն ընդունելի աղօթքներու այս օրինակները առջեւ ունիս: Եթէ ուզես, կրնաս անոնց հետեւիլ եւ մեղքի բանտէն դուրս գալ ու արձակուիլ Սատանայի կապանքներէն:

ԽՈՒՆԿ

Ընդհանրապէս բոլոր կրօններուն մէջ խունկը առկայ է:

Անիկա անուշահոտ ծառերու խէժն է, որուն ընտիրն է, որ կը գործածուի եկեղեցական արարողութեանց ընթացքին որպէս խունկ:

Խունկը եկեղեցիէն ներս կը ծխեն բուրվառով եւ խնկանոցով: Բուրվառով խնկարկուրիւնը, անմիջական աղերսունի մեր ծիսակարգին հետ, ինչ որ աւագ սարկաւագին կամ պարզ ուրարակիրին կողմէ կը կատարուի:

Բայց խնկարկուրիւն կը կատարեն նաեւ ֆահանայ հայրերն ու բարձրատիեան եկեղեցականները, ինչպէս Ս. Պատարագին թափօրին, Նախատօնակներու եւ Խաչի փառաբանման՝ Աւագ Շաբթուան Քրիստոսի տնօրինական կեանքի վախճանը յիշատակելով, Մատնութիւնը, Չարչարանքները, Խաչելութիւնը, Թաղումն ու հրաշափառ Ս. Յարութիւնը, Խաչի ֆու Քրիստոս... շարականի երգեցողութեամբ, երբ հանդիսադիր եկեղեցականը ինք կը խնկարկէ եւ խունկի բուրմունքով կ'օժէ բեմի եզրին դրուած ճանաչաւոր Կենաց Փայտը, միանգամայն հրաւիրելով հաւատացեալ ժողովուրդը, խոնարհելու Քրիստոսի տնօրինական կեանքի հոգեյոյզ յիշատակներու առջեւ:

ՀԱՍՅԷ.



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 22.15-25; Եփ. 1-14:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 8.17-21

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 8.17-21

Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը, որ չգիտցուի եւ երեսան չգայ: Ուրեմն ուշադիր եղէ՛ք, թէ ինչպէ՞ս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

«Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը

կը լսեն եւ կը գործադրեն»

Վստահաբար մեզմէ իւրաքանչիւրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Միրելիներ, կարեւորը կամենալն է: Եթէ կ'ուզենք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պէտք է կատարենք, ականջ պէտք է տանք Աստուծոյ ձայնը լսելու աղօթքի ճամբով: Աստուծոյ ձայնը լսելու համար պէտք է լաւապէս ճանչնանք զԱստուած Աստուածաշունչին ընդմէջէն: Աստուածաշունչը մեր ամէնօրեայ հոգեւոր սնունդի աղբիւր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարար ունինք: Կարդանք, սնանինք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն ինչ՝ որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐՔՈՑՆ՝ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՀՈՌՄԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԶԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ
ՍԱՐԿԱԻԱԳԱՅՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՑՆ

3-րդ դարուն Հռոմի մէջ ապրած քաջ առաջնորդ եղած է Ստեփանոս Հռոմայ հայրապետը: 254 թուականին կը բարձրանայ Հռոմի աթոռին վրայ եւ կը գահակալէ մինչեւ իր նահատակութիւնը՝ 257 թուական:

Ստեփանոս Հայրապետ եղած է իր հօտը պաշտպանող եւ քաջալերող հոգեւորական մը: Ան նոյնիսկ դարձի կը բերէ եւ քրիստոնէայ կը մկրտէ Նեմեսիոս անունով հեթանոս իշխան մը եւ անոր կոյր դուստրը, որ մկրտուելէն ետք կը բժշկուի եւ աչքերը կը բացուին: Իշխանը նոյնիսկ սարկաւազ կը ձեռնադրուի եւ սակայն իր ունեցած հաստատ հաւատքին համար կը նահատակուի կայսեր կողմէ: Այսպիսով Ստեփանոս հայրապետի գահակալութեան շրջանին բազմաթիւ հոգեւորականներ եւ հաւատացեալներ կը նահատակուին Հռոմի մէջ:

Օր մը, երբ Ստեփանոս Հայրապետ Ս. եւ անմահ պատարագ կը մատուցէր, յանկարծ զինուորներ կը պաշարեն եկեղեցին եւ կը փորձեն խորտակել դուռը եւ ներս մտնել: Այն պահուն, երբ Ս. Հայրապետը կը հաղորդուի եւ կը հաղորդէ ժողովուրդը, զինուորները ներս խուժելով կը նահատակեն զինք իր արիւնը խառնելով Ս. հաղորդութեան սկիհին մէջ գտնուող Քրիստոսի սուրբ արեան: Հաւատացեալներ պատուով կը թաղեն գայն: 8-րդ դարուն անիւնները կը փոխադրուին իր անունը կրող վանքի մը մէջ եւ այնտեղ կը հանգչի ան այսօր:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՆՍԱՆ ԲԱԺԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԶԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Հայ եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական: Ապաշխարութեան եւ խոստովանութեան եկողները ծունկի կուգան, իրենցմէ մէկը կը կարդայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զոչումի աղօթքը, որուն մէջ յիշուած են կամայ եւ ակամայ գործուած բոլոր մեղքերը, իսկ քահանան մէջ ընդ մէջ կ'ըսէ. «Աստուած թողութիւն շնորհէ՛»: Զոչումի աղօթքէն վերջ, քահանան «Ողորմեսցի Ձեզ մարդասէր Աստուած» աղօթքը արտասանելով, Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները:

Հաւաքական խոստովանութենէն գատ, անհրաժեշտ պարագաներուն ապաշխարութեան եկողներ՝ կրնան առանձին ներկայանալ քահանային եւ խոստովանիլ իրենց մեղքերը եւ բարի խորհուրդներ ստանալ անկէ՝ մեղքի դէմ պայքարելու համար:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Քու Խաչը մեզի թող ապաւեն ըլլայ Տէր Յիսուս, երբ որ երեսա Հօր փառքով՝ լուսաւոր ամպերու մէջ: Այն ժամանակ, մենք չենք ամչնար՝ քեզ հաւատացողներս, այլ՝ Քու մեծ գօրութեամբդ կ'ուրախանանք, Քու աջ կողմը իբրեւ լուսոյ որդիներ, իբրեւ ցերեկուան որդիներ: Ամէն:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԻՐ ՄԱՐՄԻՆՈՎ ԲԱՎԵՑ ՄԱՐՄՆԱՎՈՐՆԵՐՍ

Ապա դրաւ իր գրաստին վրայ եւ տարաւ պանդոկ մը ու գայն ինամեցեց (Ղկ. 10.34): Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Միւնեցի եւ ուրիշներ կը հաստատեն, որ հոս յիշուած գրաստը Քրիստոսի մարմինն է, իսկ պանդոկը՝ եկեղեցին: Վիրաւորը դրաւ իր գրաստին վրայ խօսքը կը նշանակէ, որ Յիսուս վիրաւորները, այլ խօսքով՝ 161 մեղաւորները, առաւ իր մարմինին վրայ եւ իր մարմինով քաւեց անոնց մեղքերը: Պետրոս առաքեալ կը հաստատէ, որ Յիսուս մեր մեղքերը իր մարմինով կրեց խաչին վրայ (Ա.Պտ. 2.24): Պօղոս առաքեալ կը վկայէ, որ Քրիստոս իր մարմինին մէջ դատապարտեց մեղքը (Հռ. 8.3): Քրիստոս իր մարմինով քաւեց մարմնաւորներու մեղքերը: Իր մարմինով մեր մարմինները սրբեց եւ սրբացուց:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Միշտ յիշենք, որ ոչ միայն մեր հոգիները, այլ՝ մեր մարմինները նաեւ քաւուած ու սրբուած են Քրիստոսի մարմինով եւ արիւնով: Յիշենք՝ որպէսզի գիտնանք արժէքը մեր մարմիններուն: Յիշենք՝ որպէսզի անգութօրէն չվերաբերինք մեր մարմիններուն հետ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ՍԻՐՏԳ ԿԱՏՈՒԾՈՅ ՀՆՆՈՒՂ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԵ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ՛ՈՒՉԵՍ ԶԻՆՔ ԳՈՂԱԲԱՆԵԼ, Կարդա՛ր. - ՍԱՂՄՈՍ 40 ք Բաժին

Ամէն կողմէ չարիքներ գիս պաշարեցին, ա՛յնքան շատ՝ որ թիւ չունին: Անօրէնութիւններս ինծի չունին: Անօրէնութիւններս ինծի տիրեցին, եւ ա՛լ չեմ կրնար յստակ տեսնել: Գլուխս մազերէն աւելի շատ եմ, յուսահատութիւն պատճառելու չափ: Յաճիս, ո՛վ Տէր, գիս ազատէ՛, փութա՛, ո՛վ Տէր, օգնէ՛ ինծի: Թող բոլորը մէկ ամօթով մնան ու շփոթի մատնուին անոնք՝ որ իմ մահս կ'ուզեն, թող խայտառակուին ու ետ քաշուին անոնք՝ որ ինծի չարիք կը կամենան: Իրենց ամօթէն թող ապշին անոնք՝ որ գիս կը հեզնեն: Իսկ բոլոր անոնք՝ որ քեզ կը պաշտեն, թող հրճուին եւ ուրախանան, փրկութեան ցանկացողները թող միշտ ըսեն. - «Մե՛ծ է Տէրը»: Իսկ ես, թէեւ աղքատ եմ եւ չքաւոր, գիտեմ՝ որ Տէրը կը մտածէ իմ մասիս: Օգնականս եւ ազատիչս դո՛ւն ես, ո՛վ իմ Աստուածս, մի՛ ուշանար:

Աղօթքը ոսկեայ կամուրջ է մարդուն եւ Աստուծոյ: Միշտ աղօթենք: